



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 10

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝  
2017 Թ. ՀՈՒՆԻՍԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը:
2. Հայ բանասիրության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման համար դիմած թեկնածուների գործերի քննարկում և քվեարկություն:
3. Կուրատորների տարեկան հաշվետվության քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտխորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն իր խոսքի սկզբում տեղեկացրեց, որ գիտխորհրդի 29 անդամներից նիստին մասնակցում է 22-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

**1-ին հարցի** առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ բ. գ. դ. Գայանե Գևորգյանին: Վերջինս մասնավորապես ասաց հետևյալը.

- 2016-17 ուստարում «Հայ գրականություն» առարկայից ամփոփիչ ավարտական քննություն է հանձնել հեռակա ուսուցման բաժնի 23 ուսանող: Արդյունքները հետևյալն են՝ գերազանց՝ չկա, լավ՝ 4, բավարար՝ 13, անբավարար՝ 6:

Ավարտական աշխատանք է պաշտպանել 20 ուսանող: Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են՝ գերազանց՝ 1, լավ՝ 10, բավարար՝ 9:

2016-2017 ուստարում «Հայոց լեզու» առարկայից ամփոփիչ ավարտական քննություն է հանձնել հեռակա ուսուցման բաժնի 19 ուսանող: Արդյունքները հետևյալն են՝ գերազանց՝ չկա, լավ՝ չկա, բավարար՝ 15, անբավարար՝ 4:

Ավարտական աշխատանք է պաշտպանել 17 ուսանող, որից 14-ը՝ ժամանակակից հայոց լեզվից, 1-ը՝ հայոց լեզվի պատմությունից, 2-ը՝ լեզվաբանությունից:

Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են՝ ժամանակակից հայոց լեզվի ամբիոն՝ 14 ուսանող, որոնցից գերազանց են ստացել 2, լավ՝ 10, բավարար՝ 2 ուսանողներ.

հայոց լեզվի պատմության ամբիոն՝ 1 ուսանող, որն ստացել է «լավ» գնահատական:

Ամփոփիչ քննությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսանողների մասնագիտական պատրաստականությունը ընդհանուր առմամբ լավ էր. նրանք ունեին մասնագիտական բավարար գիտելիքներ, աչքի էին ընկնում նյութի բազմակողմանի իմացությամբ, նրանց խոսքը տրամաբանված էր, դատողությունները՝ համոզիչ: Սակավաթիվ ուսանողների մոտ նկատելի էին մտքերը հստակ ձևակերպելու որոշակի դժվարություններ:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունը անցել է գործող քննակարգին համապատասխան: Ավարտական աշխատանքների թեմաները արդիական էին, բազմազան, ունեին անհրաժեշտ գիտագործնական ուղղվածություն, գիտական և ճանաչողական որոշակի արժեք:

Կարևոր ենք համարում նշել, որ, ինչպես նախորդ, այնպես էլ 2016-17 ուստարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման, ավարտական աշխատանքների պաշտպանության գործընթացը ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետում կազմակերպված էր պատշաճ մակարդակով, պահպանված էին ընթացակարգային բոլոր պահանջները: Հատկապես ցանկանում ենք բարձր գնահատել բանասիրական ֆակուլտետի ղեկան

Ա. Ավագյանի կատարած մեծ աշխատանքը, որի արդյունքում պետական քննական հանձնաժողովի աշխատանքները ընթացել են դեկանատի կողմից սահմանված ժամանակացույցի համապատասխան, քննական կարգի խախտումներ չեն եղել, և ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովն աշխատել է գործնական և փոխադարձ վստահության մթնոլորտում:

Օրակարգի **2-րդ հարցը** նվիրված էր հայ բանասիրության ֆակուլտետի պրոֆեսորա-դասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման համար դիմած թեկնածուների գործերի քննարկմանն ու քվեարկությանը:

**Լ Ս Ե Ց Ի Ն.**- *Հայոց լեզվի ամբիոնի ղոցենտի* թափուր տեղի համար հայտարարված մրցույթին բ. գ. թ., ամբիոնի ասիստենտ Մանուկ Հարությունի Ֆալակյանի, **ասիստենտների** տեղերի հայտարարված մրցույթին բ. գ. թ., ամբիոնի ասիստենտներ Անահիտ Լևոնի Մանուկյանի, Սուսաննա Վոլոդյայի Գաբրիելյանի, Մարիամ Վրույրի Կիրակոսյանի, Անահիտ Ժորայի Մովսիսյանի, *հայոց լեզվի պատմության ամբիոնի ասիստենտի* տեղի հայտարարված մրցույթին բ. գ. թ., ամբիոնի ասիստենտ Նաիրա Վրույրի Պարոնյանի, ակադ. *Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի ղոցենտի* թափուր տեղի համար հայտարարված մրցույթին բ. գ. թ., ամբիոնի ղոցենտ Ռուբիկ Կառլենի Էլոյանի, **ասիստենտի** տեղի համար հայտարարված մրցույթին բ. գ. թ., ամբիոնի ասիստենտ Նվարդ Խաչատուրի Վարդանյանի, *հայ նորագույն գրականության ամբիոնի ղոցենտի* թափուր տեղի համար հայտարարված մրցույթին բ. գ. թ., ամբիոնի ղոցենտ Արմենուհի Մարտունի Արզումանյանի մասնակցելու հարցերը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**- Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը, ղոց. ղոց. Վ. Պետրոսյանը, Ս. Գրիգորյանը և այլք:

Նշվեց, որ բ. գ. թ., հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Մանուկ Ֆալակյանի գիտամանկավարժական գործունեությունը արդյունավետ է: 1986 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «1950-60-ական թվականների ռուս-հայերեն բառարանագրությունը և հայերենի բառապաշարի հարստացումը» թեմայով: Տպագրել է ուսումնամեթոդական աշխատանք՝ «Ավանդական ուղղագրություն. սկզբունքներ, վարժություններ, թելադրության նյութեր», հրատարակել է գիտական 9 հոդված: 1985 թվականից աշխատում է հայոց լեզվի

ամբիոնում՝ որպես ասիստենտ, 2016 թվականին ստացել է դոցենտի կոչում: «Դասախոսն ուսանողի աչքերով» սոց. հարցման արդյունքը 4.41 միավոր է: Ամբիոնն ու մրցութային հանձնաժողովը նրա թեկնածությունը պաշտպանել են միաձայն:

Բ. գ. թ., հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Անահիտ Մանուկյանի գիտամանկավարժական գործունեությունը արդյունավետ է: 1991 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ժամանակակից հայ արձակի լեզվի և ոճի հարցեր» թեմայով: Տպագրել է ուսումնամեթոդական աշխատանք՝ «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի գործնական առաջադրանքների ձեռնարկ» /համահեղինակներ/, հրատարակել է գիտական 8 հոդված: 1991 թվականից աշխատում է հայոց լեզվի ամբիոնում՝ որպես ասիստենտ: «Դասախոսն ուսանողի աչքերով» սոց. հարցման արդյունքը 3.90 միավոր է: Ամբիոնն ու մրցութային հանձնաժողովը նրա թեկնածությունը պաշտպանել են միաձայն:

Բ. գ. թ., հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Սուսաննա Գաբրիելյանի գործում առկա են պահանջվող բոլոր փաստաթղթերը: 1988 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Խորհրդահայ պոեզիան 30-ական թթ. 1-ին կեսին» (զարգացման միտումներ և ուղղություններ) թեմայով: Տպագրել է ուսումնամեթոդական աշխատանք՝ «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի գործնական աշխատանքների ձեռնարկ» /համահեղինակներ/, հրատարակել է գիտական 12 հոդված: 1993 թվականից աշխատում է հայոց լեզվի ամբիոնում՝ որպես ասիստենտ: «Դասախոսն ուսանողի աչքերով» սոց. հարցման արդյունքը 4.65 միավոր է: Ամբիոնը նրա թեկնածությունը պաշտպանել է բոլորը կողմ՝ 1 ձեռնպահով, իսկ մրցութային հանձնաժողովը՝ միաձայն:

Բ. գ. թ., հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Մարիամ Կիրակոսյանի գործում առկա են պահանջվող բոլոր փաստաթղթերը: 1984 թ. ավարտել է ԵՊՀ-ի ասպիրանտուրան: Տպագրել է ուսումնամեթոդական աշխատանք՝ «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի գործնական աշխատանքների ձեռնարկ» /համահեղինակներ/, 9 մենագրություն /համահեղինակներ/, հրատարակել է գիտամեթոդական 9 հոդված: 2003 թվականից աշխատում է հայոց լեզվի ամբիոնում՝ որպես ասիստենտ: «Դասախոսն ուսանողի աչքերով» սոց. հարցման արդյունքը 4.40 միավոր է: Ամբիոնն ու մրցութային հանձնաժողովը նրա թեկնածությունը պաշտպանել են միաձայն:

Բ. գ. թ., հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Անաիդա Մովսիսյանի գիտամանկավարժական գործունեությունը արդյունավետ է: 2006 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ա. Ս. Պուշկինի բանաստեղծությունների հայերեն թարգմանությունները» թեմայով: Տպագրել է ուսումնամեթոդական աշխատանք՝ «Ժամանակակից հայոց լեզվի գործնական առաջադրանքների ձեռնարկ /ձևաբանություն» /համահեղինակներ/, հրատարակել է գիտական 10 հոդված: 2006 թվականից աշխատում է հայոց լեզվի ամբիոնում՝ որպես ասիստենտ: «Դասախոսն ուսանողի աչքերով» սոց. հարցման արդյունքը 4.51 միավոր է: Ամբիոնն ու մրցութային հանձնաժողովը նրա թեկնածությունը պաշտպանել են միաձայն:

Բ. գ. թ., հայոց լեզվի պատմության ամբիոնի ասիստենտ Նաիրա Պարոնյանը գիտական մի շարք հոդվածների հեղինակ է, երկար տարիներ աշխատում է ամբիոնում: Դասախոսը ուսանողի աչքերով հարցման վերջին ցուցանիշը եղել է 4.48: Ամբիոնն ու մրցութային հանձնաժողովը նրա թեկնածությունը պաշտպանել են միաձայն:

Բ. գ. թ., ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության ամբիոնի դոցենտ Ռուբիկ Էլոյանի գործում առկա են պահանջվող բոլոր փաստաթղթերը, ըստ որոնց՝ նա 1979-ին ընդունվել է 1984թ. ավարտել է ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետը: 1997թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել ք. գ. թ. գիտական աստիճան: 1987թ. առ այսօր աշխատում է ամբիոնում. նախ՝ որպես ասիստենտ, իսկ 2008թ. որպես դոցենտ: Ռ. Էլոյանը գիտական մեկ տասնյակ հոդվածների և 2 մենագրության հեղինակ է, ֆակուլտետի արհմբյուրոյի նախագահն է: «Դասախոսը ուսանողի աչքերով» սոց. հարցման վերջին ցուցանիշը եղել է 4.5: Ամբիոնն ու մրցութային հանձնաժողովը նրա թեկնածությունը պաշտպանել են միաձայն:

Բ. գ. թ., ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության ամբիոնի ասիստենտ Նվարդ Վարդանյանի գործում առկա են պահանջվող բոլոր փաստաթղթերը, ըստ որոնց՝ նա 1996-ին ընդունվել է 2000թ. ավարտել է ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետը: 2005թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել ք. գ. թ. գիտական աստիճան: 2006թ. առ այսօր աշխատում է ամբիոնում՝ որպես ասիստենտ: Ն. Վարդանյանը գիտական 20 հոդվածների և 2 մենագրության, 9 թեզիսի հեղինակ է: «Դասախոսը ուսանողի աչքերով»

սոց. հարցման վերջին ցուցանիշը եղել է 4.6: Ամբիոնն ու մրցութային հանձնաժողովը նրա թեկնածությունը պաշտպանել են միաձայն:

Հայ նորագույն գրականության ամբիոնի դոցենտ Արմենուհի Արզումանյանի գործում առկա են պահանջվող բոլոր փաստաթղթերը, ըստ որոնց՝ նա 1983-ին ընդունվել և 1988թ. ավարտել է ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետը: 1996թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել բ. գ. թ. գիտական աստիճան: 1996թ. առ այսօր աշխատում է ամբիոնում. նախ՝ որպես ավագ լաբորանտ, իսկ 2000թ. որպես դասախոս: Ա. Արզումանյանը ուսումնամեթոդական 14 աշխատանքների, գիտական 8 հոդվածների և ուսումնամեթոդական 1 ձեռնարկի հեղինակ է: «Դասախոսն ուսանողի աչքերով» սոց. հարցման վերջին հինգ տարիների արդյունքը 4.59 միավոր է: Ամբիոնն ու մրցութային հանձնաժողովը նրա թեկնածությունը պաշտպանել են միաձայն:

Փակ-գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց ձայներ հաշվող հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

1. Պետրոսյան Վարդան – նախագահ
2. Բաբայան Գարուն
3. Հովակիմյան Հովհաննես

Փակ-գաղտնի քվեարկությունից հետո նախագահ Վ. Պետրոսյանը հրապարակեց արդյունքները.

Խորհրդի 29 անդամներից նիստին ներկա է եղել 22-ը, և քվեարկությանը մասնակցել է 22-ը:

Բաժանվել է 22 քվեաթերթիկ:

Քվեատուփում հայտնվել է 22 քվեաթերթիկ:

Քվեարկությունն ունեցավ հետևյալ արդյունքները՝

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ամբիոնը	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Ֆալակյան Մանուկ Հարությունի	հայոց լեզու	19	1	2
2.	Մանուկյան Անահիտ Լևոնի	հայոց լեզու	18	3	1
3.	Գաբրիելյան Սուսաննա Վոլոդյայի	հայոց լեզու	12	9	1
4.	Կիրակոսյան Մարիամ Վրույրի	հայոց լեզու	18	3	1
5.	Մովսիսյան Անահիդա Ժորայի	հայոց լեզու	18	3	1
6.	Պարոնյան Նաիրա Վրույրի	հայոց լեզվի պատմ.	18	3	1
7.	Էլոյան Ռուբիկ Կառլենի	ակադ. Հր. Թամրազյանի անվ. հայ գրակ. պատմ.	20	2	-
8.	Վարդանյան Նվարդ Խաչատուրի	ակադ. Հր. Թամրազյանի անվ. հայ գրակ. պատմ.	20	1	1
9.	Արզումանյան Արմենուհի Մարտունի	հայ նորագույն գրակ.	20	2	-

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.**- 1. Հաշվի առնելով փակ-գաղտնի քվեարկության արդյունքները՝ հայ բանասիրության ֆակուլտետի դասախոսական կազմի ներքոհիշյալ անդամներին ընտրված համարել համապատասխան պաշտոններում՝

1. Ֆալակյան Մանուկ Հարությունի - հայոց լեզվի ամբիոնի դոցենտ
2. Մանուկյան Անահիտ Լևոնի - հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ
3. Գաբրիելյան Սուսաննա Վոլոդյայի - հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ
4. Կիրակոսյան Մարիամ Վրույրի - հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ
5. Մովսիսյան Անահիդա Ժորայի - հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ
6. Պարոնյան Նաիրա Վրույրի - հայոց լեզվի պատմ. ամբիոնի ասիստենտ
7. Էլոյան Ռուբիկ Կառլենի - ակադ. Հր. Թամրազյանի անվ. հայ գրակ. պատմ. ամբիոնի դոցենտ
8. Վարդանյան Նվարդ Խաչատուրի - ակադ. Հր. Թամրազյանի անվ. հայ գրակ. պատմ. ամբիոնի ասիստենտ

9. Արգումանյան Արմենուհի Մարտունի – հայ նորագույն գրակ. ամբիոնի դոցենտ

2. Միջնորդել ԵՊՀ-ի ռեկտորատին՝ հաստատելու հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի որոշումը և գործող կարգի համաձայն՝ նրանց հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

Օրակարգի **3-րդ հարցը** նվիրված էր կուրատորների տարեկան հաշվետվության քննարկմանը: Ձեկուցմամբ հանդես եկող դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը մասնավորապես նկատեց, որ բոլոր կուրատորների հաշվետվություններն իր մոտ են, նրանց կատարած աշխատանքները հիմնականում դրական են: Ձեկուցողն այնուհետև ավելացրեց, որ ռեկտորատը հաջորդ ուսումնական տարվանից կուրատորական աշխատանքները թողնում է միայն 1-ին կուրսերում, ինչը տրամաբանված որոշում է. ի վերջո ակնհայտ է, որ մնացած կուրսերում այդ աշխատանքները կրում են ձևական բնույթ:

**Ընթացիկ հարցերում**

**Լ Ս Ե Ց Ի Ն** – Հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ, բ. գ. թ. **Անի Սամվելի Մուրադյանի** դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Լ. Հովսեփյանը և դոց. Լ. Թելյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ, բ. գ. թ. **Անի Սամվելի Մուրադյանի** դոկտորական ատենախոսության թեմա հաստատել «Արդի հայերենի քաղաքագիտական տերմինների լեզվական քննություն» (Ժ.02.01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ):

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**